**Լրամշակված նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Կ-653-21.08.2023-ՏՀ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 189-րդ հոդվածի 6-րդ մասում «պահանջները» բառից հետո լրացնել «և մաքսային հսկողության գոտիներում վարքագծի պարտադիր, *ներառյալ մաքսային հսկողության գոտում անձանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժման* կանոնները» բառերը:

**Հոդված 2.** Օրենքում լրացնել նոր՝ 302.1-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 302.1. Մաքսային հսկողության գոտում սահմանված պարտադիր վարքագծի կանոնները խախտելը**

1. Մաքսային հսկողության գոտում սահմանված վարքագծի պարտադիր կանոնները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքը 6 ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:»:

**Հոդված 3.** Օրենքի 326-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «եթե» բառից հետո լրացնել «մաքսային կանոնների խախտում կատարած անձը խոչընդոտում է *մաքսային մարմինների պաշտոնատար անձանց*

գործառույթների իրականացմանը, հրաժարվում է դադարեցնել կատարվող իրավախախտումը կամ» բառերը,

2) 2-րդ մասում «անձը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն է ցույց տալիս» բառերը փոխարինել «անձը խոչընդոտում է մաքսային մարմնի պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը» բառերով, իսկ «երեք օր ժամկետով՝ ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում գրավոր տեղեկացնելով դատախազին» բառերը՝ «6 ժամ՝ այդ մասին անհապաղ հայտնելով դատախազին» բառերով,

3) լրացնել նոր՝ 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածի իմաստով մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը խոչընդոտել է համարվում *սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում* մաքսային մարմինների պաշտոնատար անձանց օրինական պահանջներին չենթարկվելը, մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն ցույց տալը, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքների հայտնաբերման աշխատանքներին խանգարելը կամ այլ կերպ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունների իրականացմանը խոչընդոտելը:»:

**Հոդված 4.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, *բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից:*

2. Սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված՝ մաքսային հսկողության գոտիներում վարքագծի պարտադիր կանոնները սահմանվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

*ՏԵՂԵԿԱՆՔ*
*ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*~~Առաջին ընթերցում~~*
*Երկրորդ ընթերցում*

*Կ-653-21.08.2023-ՏՀ-011/1*
*լրամշակված նախագիծ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ~~թիվ~~ ՀՕ-353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 189-րդ հոդվածի 6-րդ մասում «պահանջները» բառից հետո լրացնել «և մաքսային հսկողության գոտիներում վարքագծի պարտադիր, ներառյալ մաքսային հսկողության գոտում անձանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժման կանոնները» բառերը:

**Հոդված 2.** Օրենքում լրացնել նոր՝ 302.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 302.1. Մաքսային հսկողության գոտում սահմանված պարտադիր վարքագծի կանոնները խախտելը*

1. Մաքսային հսկողության գոտում սահմանված վարքագծի պարտադիր~~, ներառյալ, մաքսային հսկողության գոտում անձանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժման~~ կանոնները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքը 6 ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:»:

**Հոդված 3.** Օրենքի 326-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «եթե» բառից հետո լրացնել «մաքսային կանոնների խախտում կատարած անձը խոչընդոտում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց ~~մաքսային ծառայողների~~ գործառույթների իրականացմանը, հրաժարվում է դադարեցնել կատարվող իրավախախտումը կամ» բառերը,

2) 2-րդ մասում «անձը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն է ցույց տալիս» բառերը փոխարինել «անձը խոչընդոտում է

մաքսային մարմնի պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը» բառերով, իսկ «երեք օր ժամկետով՝ ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում գրավոր տեղեկացնելով դատախազին» բառերը՝ «6 ժամ՝ այդ մասին անհապաղ հայտնելով դատախազին» բառերով,

3) լրացնել նոր՝ 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածի իմաստով մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը խոչընդոտել է համարվում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց օրինական պահանջներին չենթարկվելը, մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն ցույց տալը, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքների հայտնաբերման աշխատանքներին խանգարելը կամ այլ կերպ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունների իրականացմանը խոչընդոտելը:»:

**Հոդված 4.** ~~*Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ*~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված՝ մաքսային հսկողության գոտիներում վարքագծի պարտադիր կանոնները սահմանվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-653-21.08.2023-ՏՀ-011/1) ԵՎ «ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-653'-21.08.2023-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| **«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ** | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ** | 1) Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «թիվ» բառը:<br><br>2) Ղեկավարվելով Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածը լրամշակել՝ նախագծի | 1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է:<br><br>Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ հոդվածում «, ներառյալ մաքսային հսկողության գոտում անձանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժման» բառերը հանել և **լրացնել** նախագծի 1-ին հոդվածում՝ «պարտադիր» բառից հետո: | | |
| 2. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր** | 1) Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:», առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում «մաքսային ծառայողների» բառերը փոխարինել «մաքսային մարմինների պաշտոնատար անձանց» բառերով:<br><br>2) Օրենքի 302-րդ հոդվածի 1-ին | 1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան | Ընդունվել է:<br><br>Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եւ 2-րդ մասերով նախատեսվում է պատասխանատվություն մաքսային հսկողության շրջանակում մաքսային մարմնի պաշտոնատար անձի կատարած գործողությունները խոչընդոտելու եւ մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ մաքսային ոլորտին վերաբերող օրինական պահանջը չկատարելու համար՝ նախատեսելով նրանց որպես առանձին իրավախախտումներ՝ համապատասխանաբար սահմանելով առանձին սանկցիաներ:<br>Հետեւաբար, Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետով մաքսային մարմնի պաշտոնատար անձի՝ մաքսային ոլորտին վերաբերող օրինական պահանջը չկատարելը մաքսային մարմնի պաշտոնատար անձի կատարած գործողությունները խոչընդոտելու հասկացության ծավալում ընդգրկելը կառաջացնի | փոփոխություն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրավական շփոթ եւ կհանգեցնի իրավական որոշակիության տեսանկյունից խնդիրների:<br>Ուստի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվող Օրենքի 326-րդ հոդվածում նոր լրացվող 5-րդ մասում «համարվում» բառից հետո առաջարկում ենք լրացնել «սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում» բառերը: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 4-րդ հոդված** | 1) Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 4-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել:<br><br>2) Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին ենթակետով սահմանված դրույթը՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ | 1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է:<br><br>Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածի 1-ին մասում «օրը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից:» բառերը: | | |
| **«Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ** | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **Նախագծի 1-ին հոդված** | 1) Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «թիվ» բառը:<br><br>2) Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:», առաջարկում ենք նախագծի 1-ին | 1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է:<br><br>Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածում «27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում» բառերից հետո լրացնել «և 28-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում» բառերը: | | |